ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» հոկտեմբերի 2024թ. ՆՄՈ/503-Ա

ք. Արմավիր

«ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ, ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, 17-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 19-ի N1480-Ն որոշման 1-ին և 3-րդ կետերի պահանջների.

որոշում եմ՝

1. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով, ավելացնել 38264938.0 (երեսունութ միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Հաստատել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապիտալը՝ 390059938 (երեք հարյուր իննսուն միլիոն հիսունինը հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի քանակը 40039 (քառասուն հազար երեսունինը) մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 9742 (ինը հազար յոթ հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Հ. Հովհաննիսյան)՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-10-25 09:00:16 GMT+4
Հավաստագրի համարը՝ 04447253

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ□ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի

25 հոկտեմբերի 2024թ. ՆՄՈ/503-Ա որոշմամբ

ՀՀ Արմավիրի մարզպետ՝
_____ Դ. Խուդաթյան

Կազմվեց՝ . -----.2024թ-ին ---- թերթից

տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ ----

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ՝ 04.06.2007թ.
գրանցման թիվ 222.120.00731
Հարկ վճարողի հաշվառման համար 04418892
15.12.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ _____.___ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից «___»_____2024թ.

աշխատակից ----------

«ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրության 4.2-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ՝

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 390059938 (երեք հարյուր իննսուն միլիոն հիսունինը հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի քանակը՝ 40039 (քառասուն հազար երեսունինը), մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 9742 (ինը հազար յոթ հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 40039 (քառասուն հազար երեսունինը) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ են:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 04.06.2007թ.) բաղկացուցիչ մասը: